ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Մարտ 28, 1990

Արժանաշնորհ
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափազեան
Հովիւ Ս. Յովակիմ եւ Անանա Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Փէյլըս Հայրց.

Սիրելի Տէր Հայր,

Ստացուած է Առաջնորդ Սրբազան Հօր ուղղուած Մարտ 13, 1990 թուակիր ձեր նամակը։

Այս նամակով կը տեղեկացնէք թէ Փետրուար 4-ին, 1990, տեղի ունեցած է համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը, եւ այդ առթիւ ընտրուած են նաեւ Ծխական Խորհուրդի հինգ անդամները։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացումը։

Այս գրութեամբ կը փափաքիմ տեղեկացնել որ կը վաւերացուի Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը՝

Տոքթ. Հրաչ Տումանեան
Կրէկ Սրապեան
Կարի Մազեան
Մարթըն Բանտըլ
Կարպիս Մկրեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթեմ առողջութիւն եւ ձեր բոլորին եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն։

Աղօթակից

Խաժակ Վրդ. Պարսամեան
Առաջնորդի Փոխանորդ